



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻ

Մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Շաբաթ, 15 Յունուարը Ս. Յովհաննէս Մկրտիչի ծննդեան տօնն է: Այս տօնը նաեւ անուանակոչութեան տօնն է Յովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ:

Այս առթիւ, Կիրակի, 16 Յունուարին, եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի Յովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ: Պիտի պատարագէ եւ իր պատգամը պիտի փոխանցէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

Ս. Խորանին պիտի սպասարկէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վիգէն Աւ. Զինյ. Վասիլեան: Պատարագի աւարտին տեղի պիտի ունենայ մատաղօրհնէք: Ներկայ պիտի ըլլան Ազգային Վարչութեան ու միութեանական ներկայացուցիչներ:

Ս. Պատարագէն ետք, եկեղեցւոյ հոգեւոր հովիւին եւ հոգաբարձութեան նախաձեռնութեամբ, եկեղեցւոյ »Կարապետեան« սրահին մէջ տեղի պիտի ունենայ աւանդական տօնակատարութիւնը:

Ճաշի կողքին, նախատեսուած է գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որուն մասնակցութիւն պիտի բերեն եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի ու Յովիվուտի Ռոգ եւ Ալեք Փիլիպոս Ազգային Երկրդ. վարժարանի աշակերները:

Այս ձեռնարկը առիթ է նաեւ, որ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը հիւրընկալէ ու գնահատանքի արժանացնէ եկեղեցւոյ ծառայողները:

Այս տարի պիտի մեծարուի Ռումանահայ «Ռաֆֆի» Մշակութային եւ Հայրենակցական Միութիւնը:

### PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AT ST. GARABED CHURCH IN HOLLYWOOD ON THE NAME DAY OF THE CHURCH

Saturday, January 15<sup>th</sup>, 2011, is the Feast of St. John the Baptist, which is also the name day of St. Garabed Church of Hollywood.

Thus, on Sunday, January 16<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at St. Garabed Church.

Parish Pastor Archpriest Fr. Vicken Vassilian will assist at the altar. The blessing of *madagh* will take place after the service, followed by a luncheon at "Karapetian" Hall organized by the Parish Pastor and Board of Trustees.

The luncheon will include a cultural program presented by Sunday School students and Rose and Alex Pilibos High School students. Each year during this annual luncheon, individuals are recognized and honored for their service to the church and community. This year's honoree is the Raffi Cultural Association.

\*\*\*

ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

## **ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԵՔԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԶԱՆԴԻՊՈՒՄ**

- ԱՐՕԹԸ՝ ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ԶՈՅԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Զինգշաբթի, 13 Յունուարի կեսօրին, եւ ընդառաջելով Ղըպտի Ուղղափառ համայնքի Առաջնորդ Գերշ. Ս. Սրապիոն Եպիսկոպոսի հրաւերին, Ներկայ եղաւ համայնքի Ս. Աստուածածին եւ Ս. Աթանասիոս եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած հանդիպումին, որ ձօնուած էր Ամանորի եւ Ս. Ծնունդի տօներուն, ինչպէս նաեւ ամանորի օրը, Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքին մէջ տեղի ունեցած ոճրային խափանարարութեան գոհերուն յիշատակին:

Զանդիպումին մասնակցեցան Միջին Արեւելքի Ուղղափառ եկեղեցիներու խորհուրդի անդամ եկեղեցիներու Առաջնորդները, յանձինս Ս. Եուճին Գափլան Արքեպիսկոպոսի (Ասորի Ուղղափառ), Գերշ. Ս. Յովնան Արք. Տերտերեանի, Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի (Յայց. Առաքելական եկեղեցի), եւ հիւրընկալ Առաջնորդին: Ներկայ էր նաեւ Ամստիոքի Յոյն Ուղղափառ եկեղեցւոյ շրջանիս Առաջնորդը՝ Ս. Ժոզէֆ Չախլաուի Եպիսկոպոսը:

Աղօթքներուն մէջ, յատուկ յիշատակութեան արժանացան ամանորի օրը, Աղեքսանդրիոյ մէջ ինկած գոհերը եւ վիրաւորները: Ներկայ Առաջնորդներէն իւրաքանչիւրը արտասանեց ցաւակցական ու գօրակցական խօսք:

Առաջնորդ Սրբազանը, իր սրտի խօսքին մէջ, դատապարտանքի արտայայտութիւն ունեցաւ ահաւոր արարքին համար, վեր առաւ Ղըպտի եկեղեցւոյ հետ Յայց. Առաքելական եկեղեցւոյ սերտակցութիւնը եւ նշեց, որ քոյր եկեղեցիներէն որեւէ մէկուն դեմ կատարուած նման արարքներ համազօր են բոլորին ուղղուած հարուածի: Ան յիշեցուց, որ ոճրային արարքի վաղորդայնին, Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ցաւակցական գիր մը յղած էր Ղըպտի եկեղեցւոյ Շնուտա Գ. Պապին, դատապարտելով ոճրային արարքը, միաժամանակ կոչ ուղղելով գործելու ի խնդիր շրջանին մէջ խաղաղութեան ու համերաշխութեան հաստատման: «Կը յուսանք, որ նման

ողբերգություններ առիթ ծառայեն, որպեսզի աշխարհը արթնութիւն մը ապրի եւ ընդառաջէ նման անիմաստ վայրագութիւններու դադրեցման կոչերուն, նկատի ունենալով, որ անոնք բազմաթիւ անմեղ զոհերու պատճառ են ու համայնքը մատնած են ահ ու սարսափի», ըսաւ Առաջնորդ Սրբազանը, անելցնելով, որ պէտք է աղօթել, որպէսզի անհանդուրժողութիւնն ու վայրագութիւնը վերջ գտնեն, իսկ Եգիպտոսի ժողովուրդը, անկախ համայնքային պատկանելիութիւններէ, հաստատ մնայ կողք կողքի ապրելու դարաւոր աւանդութեան: Ան իր խօսքը եզրափակեց մաղթելով, որ Ս. Ծննդեան տօնի պատգամները՝ հաւատքի, յոյսի ու սիրոյ ճամբով մարմնաւորուին մարդկութեան վերամիասնութեամբ, ու այս առիթով, աղօթեց, որ զոհերուն հարազատները գտնեն Ս. Զոգւոյ մխիթարութիւնը:

Արարողութիւններէն ետք, Առաջնորդները ունեցան սիրոյ ճաշ:

*ON THE OCCASION OF THE NEW YEAR AND THE FEAST OF THE NATIVITY AND THEOPHANY*

**GATHERING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS**

**- PRAYERS OFFERED FOR THE VICTIMS OF THE EGYPT CHURCH BOMBING**

On the occasion of the New Year and the Feast of the Nativity and Theophany of our Lord, and upon the invitation of H.G. Bishop Serapion, head of the Coptic Orthodox Church of the Western United States, on Thursday, January 13<sup>th</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, attended a gathering of the Council of Oriental Orthodox Bishops at St. Mary and St. Athanasius Coptic Orthodox Church. During the gathering, prayers were offered for the victims of the New Year's day church bombing in Egypt.

The gathering took place with the participation of H.G. Bishop Serapion, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, head of the Syriac Orthodox Church of the Western United States, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, and H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. H.G. Bishop Joseph Zahloui, head of the Antiochian Orthodox Christian Diocese of Los Angeles and the West, also participated.

During the prayer service, each of the church leaders delivered their remarks, conveying condolences on the church bombing in Alexandria.

The Prelate expressed his solidarity with the Coptic faithful, and his grief at the losses the Coptic community in Egypt has suffered in recent times. Noting the long history of solidarity and friendship between the Coptic and Armenian Churches, who share a common faith, beliefs, and values, the Prelate stated that an assault on one is an assault on their shared faith. He recalled that immediately after the New Year's day bombing, H.H. Catholicos Aram I denounced the attacks and expressed condolences to H.H. Pope Shenouda III.

The Prelate also offered prayers during the first Divine Liturgy of the year for the souls of the victims and for peace to prevail. The Prelate continued, “through the tragedies the community has suffered, we can only hope that the world will awaken to their plight and join together in calling for an end to the senseless violence which has claimed so many lives and left the community in utter fear. We can only continue to pray for an end to the intolerance and violence, and for the citizens of Egypt, no matter their religion, to live side by side in peace and with respect for one another.” The Prelate expressed his hope that the Christmas tidings of love, joy, peace, harmony, and goodwill towards man will resonate throughout the world, renewing mankind and bringing light to the world, and concluded by praying for Almighty God to grant eternal rest to those who have lost their lives, and strength and peace to the families who are mourning their loss.

The day concluded with a luncheon.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԶՈԳԵՒՈՐ ԵՂՔԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ



Չորեքշաբթի, 12  
Յունուարին Թեմիս  
բարեխնամ Առաջնորդ  
Բարձր. Ս. Մուշեղ Արք.  
Մարտիրոսեան Ազգային  
Առաջնորդարանին մեջ  
ընդունեց այցելութիւնը  
Հայաստանեայց  
Առաքելական Եկեղեցւոյ  
Զոգեւոր Եղբայրակցութեան  
պատուիրակութեան, որ  
Ազգ. Առաջնորդարան եկած  
էր Ամանորի ու Ս. Ծննդեան  
տօներուն առիթով

շնորհաւորանք ու բարեմաղթութիւն ներկայացնելու Առաջնորդ  
Սրբազանին: Սրբազան Զօր կողքին ներկայ էր նաեւ Զոգչ. Ս. Պարթեւ Կրդ.  
Կիլիմեան:

Հիւր պատուիրակութեան անդամները Առաջնորդ Սրբազանին  
հակիրճ տեղեկութիւններ տուին Եղբայրակցութեան եկեղեցանուէր ու  
ժողովրդանուէր ծառայութիւններուն մասին:

Հանդիպումը առիթ ծառայեց խորհրդակցելու Եղբայրակցութեան ու  
մեր եկեղեցիներուն միջեւ գործունէութեան հասարակաց դաշտերուն ու  
զանոնք աւելի եւս զարգացնելու կարելիութիւններուն մասին:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ Եղբայրակցութեան գործունեութեան մասին ու ողջունեց գործակցութիւնը սերտացնելու ներկայացուցիչներուն պատրաստակամութիւնը:

Ան այս առիթով նաեւ յուշանուէրներ յանձնեց պատուիրակութեան անդամներուն:

## **PRELATE WELCOMES MEMBERS OF THE ARMENIAN ECCLESIASTICAL BROTHERHOOD**

On Wednesday, January 12<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy a delegation from the Armenian Ecclesiastical Brotherhood, who had come to convey their well wishes to the Prelate on the occasion of the New Year and Christmas.

The Prelate and guests discussed the collaboration that exists between the Brotherhood and our churches, and spoke of expanding these efforts.

The Prelate commended the service of the members, and presented them with the mementos at the conclusion of the visit.

\*\*\*

## **Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՏՈՒԱՒ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ**



Ս. Ծննդեան եւ Աստուածայայտութեան տօնին առիթով, Կիրակի, 9 Յունուարի առաւօտեան, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Լաս Վեկասի Ս. Կարապետ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, ընդառաջելով Առաջնորդ Սրբազան Հօր եւ

թեմիս կրօնական ժողովի ինդրանքին, Աւագութեան պատիւ եւ տիտղոս շնորհեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Աւետիս Բիւյ. Թորոսեանին, առ ի գնահատանք Հարաւային Ամերիկայի Արժանթինի եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմերուն մէջ իր երկարամեայ ծառայութեան՝ ի սպաս Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ եւ մեր պատուական ժողովուրդին:

Այս առթիւ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Պատարագ մատուցեց, աւագութեան պատիւ շնորհեց, օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը փոխանցեց եւ ջրօրհնէքի արարողութիւնը կատարեց: Ս. Խորանին սպասարկեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Աւետիս Զինյ. Թորոսեան:

Պատարագէն ետք, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ եղաւ ՀՕՄ-ի «Շուշի» Մասնաճիւղին կազմակերպած սիրոյ սեղանին, կատարեց սեղաններու օրհնութիւնը եւ փոխանցեց իր քաջալերանքի խօսքը: Գեղարուեստական յայտագիրի բաժինով ՀՕՄ-ի շաբաթօրեայ վարժարանի աշակերտները ելոյթ ունեցան երգերով եւ արտասանութիւններով:

Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազան Հայրը հանդիպում մը ունեցաւ շրջանի Ս. Կարապետ եկեղեցւոյ ծխական յանձնախումբին հետ, որուն հետ քննարկեց եկեղեցւոյ շինարարական աշխատանքներու ընթացքը:

## **PRELATE VISITS THE LAS VEGAS PARISH COMMUNITY ON THE OCCASION OF THE NEW YEAR AND THE FEAST OF THE NATIVITY AND THEOPHANY OF OUR LORD**



On Sunday, January 9<sup>th</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the Las Vegas parish to celebrate the Nativity and Theophany of our Lord Jesus Christ with the St. Garabed Church parish community.

The Prelate celebrated Divine Liturgy, delivered the sermon, and conducted the blessing of water on this occasion. Parish Pastor Rev. Fr. Avedis Torossian assisted

at the altar.

By the request of the Prelate and the Religious Council, H.H. Catholicos Aram I honored Fr. Avedis with the title of Archpriest for his years-long service to the Armenian Church. Thus, during the Liturgy, the Prelate read the Pontifical Encyclical bestowing upon Fr. Avedis the title of Archpriest.

Following the service, the Prelate attended a Christmas luncheon organized by the ARS “Shoushi” Chapter.

Later in the day, the Prelate met with the St. Garabed Church Parish Council to discuss the progress of the construction project.

\*\*\*

## Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ԱՐԵՄՏԵԱՆ ՄԵՐ ԹԵՄԻՆ ՄԷՋ



Յիսուս Քրիստոսի Ս.  
Ծննդեան եւ  
Աստուածայայտութեան  
Տօնին առթիւ, Հինգշաբթի,  
6 Յունուար, 2011-ին,  
Արեւմտեան մեր Թեմի բոլոր  
եկեղեցիներուն մէջ  
մատուցուեցաւ Ս.  
Պատարագ եւ  
Աստուածորդւոյն  
Մկրտութիւնը  
խորհրդանշող Ջրօրհնէքի  
արարողութիւն  
կատարուեցաւ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցեց, քարոզեց եւ ջրօրհնէքի արարողութիւն կատարեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Ներկայ էին Հայաստանի հանրապետութեան հիւպատոս Տիար Մեսրոպ Շապոյեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդր. Կոմիտէի եւ Թեմիս պատկան մարմիններու ներկայացուցիչներ եւ հաւատացեալներու խումներամ բազմութիւն մը:



Առաջնորդ Սրբազան  
Հայրը իր քարոզին մէջ  
անդրադարձաւ ծննդեան  
տօնի իմաստին թէ ինչպէս  
Աստուած իր սիրով  
խաղաղութիւն,  
համերաշխութիւն եւ  
առաւել կեանք տալու  
համար յայտնուեցաւ  
մարդուն: Եւ Արեւելքին  
աստղը փայլեցաւ բոլոր  
մարդկանց սակայն շատ  
քիչերն էին որ կրցան  
տեսնել այդ մէկը, ինչպէս

մոգերը տեսան եւ հետեւեցան այդ փայլուն աստղին եւ եկան ու իրենց  
Նուէրները բերելով երկրպագեցին Յիսուս մանուկին: Սրբազան Հայրը իր  
խօսքը շարունակելով կոչ ուղղեց բոլոր ներկաներուն որ իրենց ալ մոքերու  
Նման հետեւեցին Քրիստոսի ճշմարիտ լոյսին եւ արդարութեամբ,  
հաւատքով, սիրով, բարութեամբ, հեզութեամբ, համերաշխութեամբ եւ  
խաղաղութեամբ ապրին իրենց կեանքը:

Պատարագի աւարտին տեղի ունեցաւ ջրօրհնէքի արարողութիւն,  
կնքահայրութեամբ՝ փոքրիկն Արտաշէս Ամիրխանեանի: Առաջնորդ  
Սրբազան Հայրը այս առթիւ անգամ մը եւս անդրադարձաւ թէ Ս. Աթոռոյս

Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2011 տարին հռչակած Է Մանուկներու Տարի: Այս առթիւ Սրբազան Հայրը օրհնեց բոլոր մանուկները եւ անոնց ծնողներն ու ընտանեկան պարագաները:

Նախօրեակին՝ 5 Յունուարի երեկոյեան, բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ Ճրագալոյցի հոգեպարար արարողութիւնը: Առաջնորդ Սրբազանը Ս. Պատարագ մատուցեց Փասատիւնայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ եւ իր քարոզին մէջ, անտեց Զրիստոսի Ս. Ծնունդը: Իսկ 7 Յունուարին, Առաջնորդ Սրբազանն ու հոգեւորականաց դասու անդամներ, մեռելոց յիշատակին Կլենտէյլի եւ Հոլիվուտ Հիլզի գերեզմանատուներուն մէջ հոգեհանգստեան արարողութիւններէ ետք, այցելեցին «Արարատ Տուն», ուր կատարուեցաւ ջրօրհնէքի արարողութիւն եւ պատսպարեալները Ս. Հաղորդութիւն ստացան:

## CELEBRATION OF THE FEAST OF THE NATIVITY AND THEOPHANY OF OUR LORD



On January 6<sup>th</sup>, 2011, the Feast of the Nativity and Theophany of our Lord was ceremoniously celebrated at Prelacy Churches with Divine Liturgy, the blessing of water, and the Prelate's Traditional New Year and Christmas Dinner.

The Christmas celebrations began with Divine Liturgy on Wednesday, January 5<sup>th</sup>, the eve of the Feast of the Nativity. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at St. Sarkis Church in Pasadena.

On Thursday, January 6<sup>th</sup>, the Prelate celebrated Divine Liturgy at St. Mary's Church in Glendale on the Feast of the Nativity and Theophany, where he also delivered the sermon and conducted the blessing of water. During the service, the Prelate noted that H.H. Catholicos Aram I has proclaimed 2011 the "Year of the Armenian Child" and blessed the children in attendance.

On Friday, January 7<sup>th</sup>, Christmas Memorial Day, requiem services took place at Forest Lawn Hollywood Hills Hall of Liberty and Forest Lawn Glendale Church of the Recessional, presided over by the Prelate and with the participation of clergy members.

Following the requiem services, the Prelate and clergy visited Ararat Home in Mission Hills where they offered prayers and conducted the blessing of water in celebration of the Birth and Theophany of our Lord Jesus Christ. Services took place both at the assisted living and nursing facilities.



\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՅՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԸՆԹԻՔԸ



Հայրենի պետության, մեր Թեմի կուսակցական, միութենական ու ժողովականության ներկայացուցիչները, Ազգային Առաջնորդարանի բարերարներն ու բարեկամները Հինգշաբթի, 6 Յունուարի երեկոյեան, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի «Բաղրամեան» սրահին մեջ անգամ մը եւս

ժամադրուած էին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, հոգեւորականաց դասուն ու Ազգ. Առաջնորդարանի ընտանիքին հետ, միասնաբար տօնելու Ս. Ծնունդն ու Աստուածայայտնութիւնը, բարեմաղթութիւններով բանալու 2011 տարին ու ճամբայ ելլելու նոր նուաճումներու կամքով:

Ընթրիքին հիւրընկալն էր Թեմիս բարերարներէն Տէր եւ Տիկին Օսկօ եւ Երան Կիրակոսեան ամուրը, իսկ հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեց Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան:

Շարականներու երգեցողութեամբ՝ հոգեւորականաց դասու սրահ մուտքէն ու Աւետարանի ընթերցումէն ետք, Առաջնորդ Սրբազանը կատարեց սեղաններու օրհնութիւնը, որուն յաջորդեց Թաթաղի արարողութիւն:

Ողջոյին խօսք արտասանեցին Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի փոխ ատենապետուհի Տիկին Ծովիկ Չէյթեան, ապա սրտի խօսք արտասանեց Հայաստանի գլխաւոր հիւպատոսը: Պաստառի վրայ ցուցադրուեցաւ Վեհափառ Հայրապետին ողջոյնի, բարեմաղթութեանց ու օրհնութեան խօսքը:

Ճաշի պահուն ու անկէ ետք, կիրարկուեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր մը:

Առաջնորդ Սրբազանը արտասանեց երեկոյի եզրափակման իր օրհնութեան խօսքն ու Ս. Ծննդեան տօնի պատգամը: Ողջունելէ ետք բոլոր պաշտօնական հիւրը, բարերարներն ու ներկաները, Առաջնորդ Սրբազանը հանգամանօրէն խօսեցաւ Աստուածորդւոյն Ս. Ծնունդով մարդկութեան ուղղուած շնորհքներուն ու պատգամներուն՝ մարդկութեան ուղղուած հաւատքի, յոյսի ու սիրոյ պատգամներուն մասին, ապա նաեւ անդրադարձաւ 2011ը Հայ Մանուկի Տարի հռչակելու Վեհափառ Հայրապետի որոշումին: Ան այս առիթով շնորհակալութեան յատուկ խօսք ուղղեց երեկոյի գլխաւոր հովանաւոր Տէր եւ Տիկին Օսկօ եւ Երան

Կիրակոսեան բարերար ամուլին եւ Ազգ. Առաջնորդարանի բոլոր բարերարներուն, հակիրճ կերպով անդարադարձաւ Ազգ Առաջնորդարանի նորագոյն իրագործումներուն ու յառաջիկայի մարտահրաւերներուն:

Երեկոն իր ակարտին հասաւ Առաջնորդ Սրբազանին Պահպանիչով: Հոգեւորականաց դասու առաջնորդութեամբ, ներկաները երգեցին «Կիլիկիա»ն ու Հայրապետական Մաղթանքը, ապա մտերմիկ զրոյցներով ու բարեմաղթութեանց փոխանակումով հրաժեշտ տուին իրարմէ:

(Ընթրիքին մանրամասնութիւնները եւ Առաջնորդ Սրբազանին խօսքը տեսնել Ազգ. Առաջնորդարանիս կայքէջի լրատուութեան բաժինին մէջ):

## **GREAT SHOW OF SUPPORT AT THE PRELATE'S NEW YEAR AND CHRISTMAS DINNER**



On Thursday, January 6<sup>th</sup>, 2011, over 650 Prelacy supporters gathered at "Bagramian" Hall of Holy Cross Cathedral in Montebello for the Prelate's traditional New Year and Christmas Dinner. The dinner is held annually under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, by the initiative of the Religious and

Executive Councils, and organized by the Prelacy Ladies Auxiliary.

The dinner was hosted by Mr. and Mrs. Osko and Yeran Karaghossian. The evening's Master of Ceremonies was Very Rev. Fr. Barthev Gulumian.

The evening began with the entrance of the Prelate and clergy into the hall in a procession, candles in hand and collectively singing Christmas hymns. H.E. Archbishop Yeprem Tabakian read a passage from the Bible on the Birth of Christ, after which the Prelate blessed the evening's mementos which were donate by Mr. and Mrs. Harout Jabarian.

Welcoming remarks were delivered by Ladies Auxiliary Vice-Chair Mrs. Dzovig Zetlian, followed by remarks by Executive Council Chair Mrs. Rima Boghossian, both of whom reflected on the proclamation by H.H. Catholicos Aram I designating 2011 the "Year of the Armenian Child" and stressing the need to give special attention to our youth who are the future of our church and nation.

Consul General Grigor Hovhannissian was also invited to deliver his remarks, in which he conveyed his wishes for a blessed new year.

Guests then watched the taped message of H.H. Catholicos Aram I. His Holiness commended the Prelate, Councils, and collaborators for the success

realization of the previous year's endeavors, and wished that the new year bring even greater achievements and successes

The evening also included a cultural program.

The Prelate was then invited to deliver his message.

His Eminence first and foremost gave thanks to God for granting a new year and the opportunity to gather again as members of one family to celebrate the Glorious Birth and Theophany of our Lord Jesus Christ.

He thanked the evening's hosts Mr. and Mrs. Osko and Yeran Karaghossian for their unwavering support, and to the Carolan Foundation and Lincy Foundation for their devoted support. Noting that it is owing to the moral and financial of sponsors that the Prelacy's endeavors are successfully realized, the Prelate announced that this year donations totaling \$500,000 were made to the Christmas Fund.

The Prelate then brought to the attention of the guests a few of the accomplishment of the past year.

The Prelate concluded, "and now, we look forward to a new year with the hope of new successes and new accomplishments. There is much to be done year, but be assured that all will be done when we work together with faith, hope, love, perseverance, and commitment. Inspired and motivated by the achievements of the past, let us endeavor on a new year with renewed drive and vigor, and in everything giving thanks to Almighty God for His divine wisdom and guidance. On this joyous occasion, let us join together once again and proclaim the news of the Glorious Birth of our Savior saying, 'Glory to God in the highest, and on earth peace, goodwill toward man'. May 2011 be a blessed year for us all, for the Armenian Church, and the Armenian nation".

The evening came to a close with the Prelate's benediction, and the singing of the Cilician and Pontifical anthems.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀՕՄ-Ի 100ԱՄԵԱԿԻ ԱԼՊՈՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**

Կիրակի, 16 Յունուարին, կ.ե. ժամը 3-ին, ՀՕՄ-ի 100-ամեակին առիթով լոյս տեսած Ալպոմի ներկայացման եւ գլխավոր նուիրատուներու անուններու զետեղման պաշտօնական հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ ՀՕՄ-ի Կեդրոնին մէջ, Կլենտէյլ:

Ձեռնարկը կազմակերպուած է ՀՕՄ-ի 100-ամեակի Հիմնադրամի Յանձնախումբին կողմէ:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ հանդիսութեան եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան եւ գնահատանքի խօսքը:

**PRELATE TO ATTEND ARS CENTENNIAL  
CONCLUDING EVENT**

On Sunday, January 16<sup>th</sup>, the presentation of the ARS Centennial Album and a thank you reception for donors to the ARS Centennial Fund will take place at the Regional Headquarters in Glendale. The event concludes the Centennial celebrations.

The Prelate will attend and convey his blessings and message.

\*\*\*